ՀՀ ԿԳՄՍՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեման՝** «Սովորողների մոտ պատկերավոր մտածողություն և փաստարկված խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասերին »

**Մասնակցի անուն, ազգանունը՝** Չինար Գալոյան

**Դպրոցը՝** Արարատ քաղաքի թիվ 3 հիմնական դպրոց

Դասավանդած առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Արարատ 2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների պատկերավոր մտածողության ձևավորումը «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասերին
2. Սովորողների փաստարկված խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասերին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**: 21-րդ դարի սրընթաց տեխնոլոգիական զարգացումները նոր մարտահրավեր են նետում ուսումնական հաստատություններին. «նախապատրաստել սովորողներին ապագա բարեկեցիկ կյանքի համար ապագայում, որը այսօր մեզ համար տեսանելի չէ»[1]: Այսօր արդեն դպրոցը միայն ինֆորմացիայի ու գիտելիքի փոխանցող չպիտի լինի, իսկ սովորողը՝ սոսկ յուրացնող: Այն սովորողների մեջ պիտի ձևավորի հմտություններ, որոնք կօգնեն ճիշտ կողմնորոշվել ապագա տնտեսապես ու տեխնոլոգիապես զարգացած աշխարհում, ինֆորմացիայի մեծ հոսքում, կարողանան ինքնուրույն ու անկախ մտածեն, լինեն ստեղծագործ ու ազատ, ի վիճակի լինեն նոր գաղափարները դիտարկել տարբեր տեսանկյուններից, դատողություններ անել դրանց ճշմարտացիության ու արժեքի մասին: Այս առումով մեծապես կարևորվում է երեխաների մեջ պատկերավոր մտածողություն զարգացնելու ու փաստարկված խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը հատկապես «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասերին:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի հայոց լեզվի (մայրենիի) ուսումնասիրությունը պետք է հիմք ստեղծի **այլ առարկաներից գիտելիք ձեռք բերելու,** վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով ներկայացնելու համար: Իսկ գրականության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելքը, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները, պատկերավոր խոսքի գեղագիտությունը: Իսկ գրական տեքստի համակողմանի ուսումնասիրության ընթացքում զարգանում են սովորողի քննական-դատողական և պատկերավոր մտածողությունը, վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ անելու կարողությունը: Չափորոշչի նոր պահանջները բխում են ժամանակակից հասարակության արժեքների ու պահանջների փոփոխություններով. այժմ դպրոցի հիմնախնդիրն է դաստիարակել

[1] Քննադատական մտածողության խթանման մեթոդներ, Ուղեցույց II

ստեղծագործ, ինքնուրույն ու ազատ անհատականություն, որն իր մտքերն արտահայտում է գրագետ ու հիմնավոր փաստարկումներով, ունի հետազոտական ստեղծագործ միտք: «Մերօրյա դպրոցում ոչ այնքան կարևորվում է գիտելիքների մեծածավալ հաղորդումը, որքան դրանց՝ երեխաների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունավետությունը, ուսումնական գործունեության ծավալման և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանելիությունը: Այս խնդիրների իրականացումը պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատասխանեցվեն դպրոցականների ստեղծագործական-հետազոտական մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին»[2]:

ՆՊԱՏԱԿԸ. Հետազոտության նպատակն է ներկայացնել դպրոցում պատկերավոր մտածողության ու փաստարկված խոսքի զարգացման մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները «Հայոց լեզու», «Գրականություն» ու «Մայրենի» առարկաների դասերին.

1. Վերլուծել պատկերավոր մտածողության ու փաստարկված խոսքի հոգեբանական, լեզվաբանական մեթոդական, մանկավարժական, մշակութաբանական մոտեցումները:
2. Վեր հանել մեթոդներ ու տեխնոլոգիաներ, որոնք կնպաստեն սովորողների պատկերավոր մտածողության ու փաստարկված խոսքի զարգացմանը:

Հետազոտության նորարարությունն ու նշանակությունն այն է, որ մշակվել է պատկերավոր մտածողության ու փաստարկված խոսքի զարգացման կոնկրետ մեթոդաբանություն՝ հոգեբանական, լեզվաբանական, մշակութաբանական հիմնավորմամբ:

## Գլուխ 1

[2] Աղաջանյան Զարիկ, Հայոց լեզվի ուսուցման ու խոսքի մշակույթի ձևավորման մեթոդիկա, Երևան, 2021, էջ 17-18:

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ», «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» և «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԵՐԻՆ

Պատկերավոր մտածողության ձևավորման մեխանիզմների հետազոտությունը մեծ նշանակություն ունի տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ: Պատկերավոր մտածողությունը ի ծնե տրված շնորհ չէ: Ինչպես յուրաքանչյուր հոգեբանական պրոցես, այն նույնպես զարգացման ու շտկման կարիք ունի: Լինելով մտածողության ավելի բարձր տեսակ՝ այն բացահայտում է օբյեկտների ավելի խորը, ոչ ակնհայտ գոյություն ունեցող հատկություններն ու դրանց միջև կապերը: Պատկերավոր մտածողության դեպքում խնդիրներ լուծելու համար օգտագործվում են ոչ թե հասկացություններ, դատողություններ, եզրահանգումներ, այլ պատկերներ: «Այս պատկերները դուրս են բերվում անմիջականորեն հիշողությունից կամ վերարտադրվում են երևակայության միջոցով: Մտավոր խնդիրները լուծելու գործընթացում այս պատկերները մտովի փոխակերպվում են այնպես, որ արդյունքում մենք կարող ենք գտնել մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները[3]»:

Պատկերավոր մտածողությունը այսօր ճանաչողական ամենաարժեքավոր ռազմավարություններից մեկն է համարվում, քանի որ թույլ է տալիս խնդիրները ձևակերպել, կառուցել և լուծել նորովի:

Պատկերավոր մտածողության ձևավորումը հնարավոր է իրականացնել ինչպես «Հայոց լեզու», այնպես էլ «Մայրենի» և «Գրականություն» առարկաների դասերին:

«Գրականությունը արվեստի մի համապարփակ ճյուղ է՝ խոսքի արվեստ, պատկերավոր, հուզական մտածողություն և այլն[4]»: Եվ հենց «Մայրենի», «Գրականություն» առարկայի դասերի ժամանակ գրական երկերի պարբերական ընթերցումն ու վերլուծությունը, գեղարվեստական, պատկերավոր բարձր խոսքի հետ առնչվելը նպաստում է պատկերավոր մտածողության ձևավորմանը: Բայց որպեսզի այդ ընթերցանությունը լինի արդյունավետ և իսկապես նպաստի պատկերավոր

[3] Բժշկական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ, էջ 56
[4] Գրականության տեսության արդի հիմնահարցեր, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016, էջ 12

մտածողության ձևավորմանն ու զարգացմանը, պետք է ընթերցանությունը դարձնել ինտենսիվ։ Այն պետք է ուղեկցվի հեղինակի լեզվական ոճի, կիրառած պատկերավորման ու արտահայտչական միջոցների վերլուծությամբ։ Դասագրքերում զետեղված գեղարվեստական նյութի, հատկապես բանաստեղծությունների ուսումնասիրության վերլուծության ժամանակ աշակերտները պետք է գտնեն պատկերավորման միջոցները՝ մակդիրները, համեմատություններն ու փոխաբերությունները, հասկանան անձնավորումը և վերջապես կարողանան վեր հանել խորհրդանշանները։

Օրինակ՝ մակդիրներով հարուստ բանաստեղծություն է «Ես իմ անուշ Հայաստանին. . .»։ Այստեղ կարելի է առաջարկել երեխաներին դուրս գրել մակդիրները, խմբավորել դրական ու բացասական իմաստ արտահայտող մակդիրները[5]։ Առաջարկել իրենց ընտրությամբ այդ մակդիրներից 7-ով գրել «5 րոպեանոց շարադրանք»։ Կարելի է նաև առաջարկել աշակերտներին որոշել, թե որ խոսքի մասերով են ավելի շատ արտահայտվում մակդիրները։

Կարելի է անգամ ուշադրություն դարձնել մակդիրների «գույնին»։ Հ. Մաթևոսյանի ստեղծագործության ուսումնասիրությունը այդ առումով ամենից հարմարն է. կանաչ դաշտ, կանաչ արև, կանաչ աշխարհ, շեկ դաշտեր, շեկ ճանապարհ և այլն։

Իհարկե պատկերավորման բոլոր միջոցներին այժմ չենք անդրադառնա, դրանք, ստեղծագործության ոճից ելնելով, պետք է վեր հանել յուրաքանչյուր ստեղծագործության ուսումնասիրության ժամանակ։ Բայց այդպես մենք միայն աշակերտին սովորեցնում ենք ճանաչել պատկերավորման միջոցները, գնահատել դրանք, վերլուծել։ Բայց կարևոր է, որ նրանք սովորեն նաև գործածել դրանք իրենց խոսքում՝ դրանով խթանելով պատկերավոր մտածողության զարգացումը։

Խոսքը պատկերավորությամբ հարստացնում և ավելի արտահայտիչ են դարձնում բանադարձումները (հարանունություն, աստիճանավորում, հակադրություն, բազմաշաղկապություն, բառածաղ. ճարտասանական հարց,

[5] Թովմասյան Թամարա, Աբազյան Ս. , Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան 2019

շրջասույթ, շրջադասություն և այլն)։ Այստեղ հարկ է նշել, որ մեր նպատակին՝ այն է՝ խոսքի պատկերավորությանը հասնելու համար, կարող ենք կիրառել ոչ միայն «Մայրենիի» ու «Գրականության» ժամերը. խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցները, դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակների միավորներով՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն։ Քննարկվող միջոցների դրսևորման հիմնական ոլորտը լեզվի բառային և քերականական մակարդակներն են[6]։

Պատկերավոր մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ են.

- «5 րոպեանոց շարադրանք»,
- «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով »
- «Կանխագուշակության աղյուսակ»
- «Բանալի բառեր»
- «Մտագրոհ»
- «Խմբավորում»
- «Հնգյակ»
- «Քառաբաժան»։

Պատկերավոր մտածողության ձևավորմանը նպաստող հետաքրքիր մեթոդ է Բուրիմեն[7]։ Հանձնարարվում է բանաստեղծություն հորինել տրված հանգով կամ թեմայով։ Օրինակ՝ բարձր դասարաններում տրվում է հետևյալ ռիթմը «քեզ-վես», «սիրով-երկնքով»։

Հայաստա՛ն, դու կանգուն ես սիրով,

Խաչով ու գրով, որ պահում են քեզ։

Եվ քո պարզ ու խաղաղ երկնքով

Թող հավերժ թևածի արծիվը վես։

---

[6] Ավետիսյան Յուրի, Խոսքի արտահայտչականություն (http://www.ysu.am/files/06Y_Avetisyan-1431951000-.pdf )

[7] Обучение способам аргументации в школе: эволюция методов https://nsportal.ru/shkola/russkiy-yazyk/library/2013/01/21/obuchenie-sposobam-argumentatsii-v-shkoleevolyutsiya

Ընդհանրապես ստեղծագործական աշխատանքները պատկերավոր մտածողության ձևավորման ու զարգացման հրաշալի միջոց են։ Երեխաները սկսում են մտածել այս կամ երևույթի մասին, համադրել դրա հետ փոխկապակցված պատկերներ, խորհրդանիշներ, ձևավորել գեղարվեստական պատկերավոր խոսք։ Օրինակ՝ հանելուկների ստեղծումը զարգացնում է սովորողների տրամաբանությունը, խոսքը, գործի դնում երևակայությունը։ Հանելուկների կազմումը ուղղված է աշակերտի բառապաշարի զարգացմանը, ոչ ստանդարտ մտածելակերպի ձևավորմանը։ Ի դեպ հանելուկների կազմումը կարելի է օգտագործել ոչ միայն մայրենիի, հայոց լեզվի ժամերին, այլ նաև վիկտորինաների, տարբեր առարկաներից գիտակների մրցույթների անցկացման ժամանակ։ Նույնը կարելի է ասել նաև առակների, հեքիաթների ստեղծման մասին։ Օրինակ՝ 5-րդ դասարանում աշակերտները հաճույքով են հեքիաթներ հորինում, շարունակում հեքիաթը, առակ գրում ըստ որևէ ասացվածքի։

Պատկերավոր մտածական ներուժի ընդլայնման ևս մի քանի տեխնիկա նշենք[8].

- Անցորդի բնութագիր. այս մեթոդը կօգնի կազմել մարդկանց բառային դիմանկարը, որոշել։ Առաջարկվում է փողոցում, խանութում կամ երթուղայինում ընտրել որևէ մեկին, ուշադիր հետևել, ուսումնասիրել նրան, անուն տալ կերպարին, նկարագրել արտաքինը, հետո փորձել ներկայացնել նրա հոգեբանական պատկերը, պահվածքը, հետաքրքրությունները, զբաղմունքը։ Ժամանակի ընթացքում նկարագրությունները ավելի ինքնավստահ կդառնան, ավելի մանրամասն ու հետաքրքիր։ Կարելի է քննարկել լավագույն աշխատանքը կամ լավագույն հատվածները։
- «Ժամանակին հակառակ» վարժությունը զարգացնում է քննադատական մտածողությունը։ Աշակերտին էսսե կամ թեմատիկ շարադրություն գրելու առաջադրանք է տրվում, որի իրադարձությունները պետք է շարադրել վերջից՝ ասես կինոժապավենը հետ է պտտվում։

[8] Ильясов, Д. Ф. Практическая психология в педагогической деятельности учителя. В 5 книгах. Кн. 1: Развитие интеллектуальной сферы учащихся : учебное пособие для слушателей курсов повышения квалификации педагогических кадров / Д. Ф. Ильясов, А. А. Севрюкова, Е. А. Селиванова, В. В. Кудинов. - Челябинск. :

Բոլոր այս մեթոդները միտված են բանավոր ու գրավոր պատկերավոր խոսք ստեղծելու կարողության ձևավորմանը: Պատկերավոր խոսքի զարգացմանը այս մեթոդների ներդմամբ կարելի է նպաստել ոչ միայն մայրենիի ու գրականության, այլև «Հայոց լեզվի» դասաժամերին: Օրինակ՝ ածական խոսքի մասի, դարձվածքների, բառերի ձևաիմաստային խմբերի (հոմանիշ, հականիշ, հարանուն, համանուն) ուսումնասիրությունը օգնում է սովորել կազմել պատկերավոր խոսք, կիրառել պատկերավորման միջոցները գրավոր ու բանավոր խոսքում:

## ԳԼՈՒԽ 2

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓԱՍՏԱՐԿՎԱԾ ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ «ՄԱՅՐԵՆԻ», «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» և «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԵՐԻՆ

Դեռևս Ցիցերոնը, խոսելով ճարտասանական կամ հռետորական արվեստի մասին, գրել է. «Ճարտախոս կարելի է համարել նրան, ով խոսելով… կարողանում է ապացուցել, հմայել ու համոզել։ Ապացուցելն անհրաժեշտ է, հմայելը՝ դուրեկան, համոզելը դեպի հաղթանակ տանող ուղի»[9]։ Իսկ ապացուցելու և համոզելու համար մեր խոսքը պետք է լինի հիմնավորված, փաստարկված. հմտություն, որը հաջողությամբ կարելի է ձևավորել «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասերին։ Իհարկե դրա համար նախ պետք է ուսումնական գործընթացը նպաստի քննադատական մտածողության զարգացմանը, որը հիմնված է վերլուծելու, հասկանալու և գնահատելու այն ճանապարհը, որով կազմակերպվում է իրերը ներկայացնող գիտելիքը։ Այն դասակարգվում է որպես խիստ գործնական միտք, որի միջոցով գիտելիքն օգտագործվում է առավելագույնս ողջամիտ և արդարացված եզրակացությանն արդյունավետորեն հասնելու համար։ Քննադատական մտածողությունը, այսպիսով, վերլուծաբար գնահատում է գաղափարները ՝ դրանք կոնկրետ եզրակացությունների բերելու համար։ Այս եզրակացությունները հիմնված են անհատի բարոյականության, արժեքների և անձնական սկզբունքների վրա։ Այսպիսով՝ քննադատական մտածողությունը ուղղակիորեն ազդում է անձի ֆունկցիոնալության վրա, քանի որ ավելի ինտուիտիվ և վերլուծական է դարձնում ՝ թույլ տալով լավ և իմաստուն որոշումներ կայացնել ՝ ելնելով կոնկրետ իրողություններից։

Քննադատական մտածողության զարգացումը իր հերթին նպաստում է փաստարկված խոսքի զարգացմանը։ Փաստարկումը խոսքային ու սոցիալական գործունեություն է, որի խնդիրն է վիճելի տեսակետը փոխկապակցված փաստերի ներկայացմամբ ընդունելի դարձնելը։ Ավստրալիացի փիլիսոփա Չարլզ Լեոնարդ Հեմբլինը փաստարկում է համարում խոսքային ու ոչ խոսքային ցանկացած գործունեություն, որով մեկը համոզում է մյուսին[10]։ Ավելի լայն իմաստով

[9] Միքայելյան Ա. , Մարդումյան Մ. , Մտքի հրավառություն, Երևան, 2002, էջ 56։
[10] Обучение способам аргументации в школе: эволюция методов

փաստարկում ասելով հասկանում են փաստարկներ, ապացույցներ ու հերքումներ ներկայացնելու արվեստը, կշիռ ունեցող հիմնավորների ներկայացումը այնպիսի որոշումների կայացման համար, որոնցում կարող ենք վստահ լինել:

Հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին է վերապահված սովորողներին փաստարկված խոսք կառուցելու, ելույթներ ու բանավեճեր վարելու, գրավոր ստեղծագործական աշխատանքներ ստեղծելու տարբեր տեղեկությունները քննադատաբար ընկալելու և վերլուծելու կարողությունների ձևավորումը: Աշակերտները սեփական կարծիքի փաստարկման հիմնավորման մեջ շատ հաճախ են դժվարանում. նրանք հետևում են ընդունված որևէ կաղապարի, եզրակացությունների չեն հանգում, չեն հիմնավորում իրենց խոսքը, և սա խանգարում է նրանց այս կամ այն հաղորդակացական խնդիրը լուծելիս. ինչ-որ թեմայով բանավոր կամ գրավոր շարադրանք, լիարժեք պատասխաններ, մտքերը տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնել և այլն: Բայց նախ եկեք պարզենք՝ ինչ է փաստարկված խոսքը: Դա փաստարկների ներկայացում է՝ ասելիքի, առաջ քաշած վարկածների կամ համոզմունքների հանդեպ վստահություն ստեղծելու համար: Փաստարկված գրավոր խոսքի ուսուցմանն լավագույն աշխատություններից է ամերիկացի գիտնականներ Չ. Թեմփի, Ք. Մերեդիթի, Դ. Սթիլի աշխատությունը, որի հիման վրա կազմված ուղեցույցներին հղում անելով էլ կներկայացնենք մի քանի մեթոդներ ու հնարքներ, որոնք կօգնեն ուսուցչին սովորեցնել աշակերտին ոչ միայն աշխատել տեքստային տեղեկության հետ, այլև օգտագործել այդ տեղեկությունը փաստարկված գրավոր ու բանավոր խոսք կառուցելու համար (խնդրի մատնանշում և լուծում, նրա պատճառի և հետևանքների պարզաբանում, այլընտանքներ գտնելու ունակություն):

Մտածողությունը սերտորեն կապված է խոսքի հետ: Դեռահասները ինքնուրույն դժվարությամբ են արտահայտում իրենց մտքերը թե՛ բանավոր, թե՛ գրավոր: Եվ ուսուցչից լուրջ նպատակաուղղված աշխատանք է պահանջում 5-9- րդ դասարանների սովորողների մտածողության ու խոսքի զարգացման առումով: Ահա մի քանի մեթոդներ, որոնք կօգնեն սովորողների փաստարկված խոսքի զարգացման

https://nsportal.ru/shkola/russkiy-yazyk/library/2013/01/21/obuchenie-sposobam-argumentatsii-v-shkoleevolyutsiya

գործում։

1. «Ֆիշբոուն» մեթոդը անգլերենից թարգմանաբար նշանակում է ձկան փուշ։ Այն զարգացնում է աշակերտների քննադատական մտածողությունը, օգնում իրադարձությունների միջև գտնել պատճառահետևանքային կապերը, ձևավորել ու ու լուծել խնդիրը, կառուցողական մոտեցում ցուցաբերել։ Կազմվում է դիագրամ ձկան նմանությամբ։ (Նկար1)։




Կառուցողական վերլուծության այս մեթոդը ստեղծել է ճապոնացի պրոֆեսոր Իշիկավան։ Գծանկարը կազմված է 4 մասից. գլուխ, պոչ, վերին և ստորին փշեր։ Գլուխն այն խնդիրն է, թեման, կամ հարցը, որ պետք է քննվի։ Վերևում գրանցվում են թեմայի գլխավոր հասկացությունները, խնդրի առաջացման պատճառները; Ի դեպ գլխավորները գրվում են գլխին ավելի մոտ։ Ներքևում փաստեր կապված թեմայի հետ; Իսկ պոչում արդեն տրվում է պատասխանը, լուծումը, ամփոփումը կամ սահմանումը։ Այս սխեման հիմնված է ճշգրտության ու հակիրճության վրա։ Այս աշխատանքը կարելի է կատարել խմբերով։ Սխեման գծվում է գրատախտակին; Այն ապահովում է ցանկացած խնդրի արագ լուծման տարբերակներ, ելք ստեղծված իրավիճակից։

2. Անկյուններ, այս մեթոդը ստեղծել են հոգեբանները, հետո այն սկսել է կիրառվել քննադատական մտածողության զարգացման համար։ Այն կիրառվում է նոր նյութի ներկայացումից հետո։ Քննարկման է ներկայացվում ուսումնասիրվող տեքստի հրատապ թեման, որը պետք է հետաքրքիր ու կարևոր լինի աշակերտի համար։ Կազմվում են 4 խմբեր, որոնք նախապատրաստվում են, նշում փաստեր,

հիմնավորումներ, ներկայացնում իրենց դատողությունները։ Հաջորդ փուլում սովորողներ գնում են տարբեր անկյուններ և հերթով ելույթ ունենում։ Մեկի ելույթի ժամանակ, մյուս երեքը հանդես են գալիս որպես քննադատներ։ Եզրափակիչ փուլում խոսքը տրվում է վերլուծաբաններին։ Եվ սկսվում է ամենադժվարը՝ ընդհանուր եզրակացության գալը։ Իսկ ընդհանուր քննարկմանը մասնակցող ուսուցիչը չպետք նրանց պարտադրի իր կարծքիը։

3. Բառային քարտեզ։ Փաստարկված խոսքը զարգացնելու ևս մեկ մեթոդ, որն օգնում է յուրացնել նոր հասկացությունները և հարստացնել խոսքը։ Բառապաշարի ընդլայնումը իրականացվում է ինտերակտիվ ձևով բառային քարտեզի օգնությամբ։ Այն հետևյալ կազմը ունի, որն ի դեպ, կարող է գործնականում ստեղծագործաբար փոփոխվել ու լրացվել.

- հանդիպում նոր բառի հետ
- բառի կիրառության օրինակներ
- նրա տարբեր ձևերի կազմում
- հոմանիշների ու հականիշների կազմում
- բառի բացատրության նշում
- գործածությունը տեքստում (գիրք, դասագիրք)
- նոր բառով սեփական բառակապակցությունների կազմում

Նկար 2՝ «Բառային քարտեզ»



4.«Երկար-բարակ հարցեր». այս մեթոդը շատ հարմար է կիրառել գրականության ժամերին: Ի դեպ հարցերը ամփոփման ժամին կարող են կազմել հենց սովորողները: «Բարակ» հարցերը պահանջում են հասարակ պատասխաններ. այո՛, ո՛չ, չգիտեմ: «Այս մեթոդը կարելի է անգամ երկու խմբերի միջև մրցման ժամանակ կիրառել:

| Բարակ հարցեր | Հաստ կամ երկար հարցեր |
|---|---|
| Պահանջում են միայն տեքստի իմացություն.<br>▪ Ո՞վ<br>▪ Ե՞րբ<br>▪ Որտե՞ղ<br>▪ Ինչպես էին անվանում…<br>▪ Ի՞նչ էին խոսում<br>▪ Ի՞նչ էր մտածում…<br>▪ Ի՞նչ էր անում | Պահանջում են մտածում և վերլուծություն: Միացնում ենք գլուխը<br>▪ Բացատրեք՝ ինչու<br>▪ Ուրիշ ինչպես կարող էր վարվել<br>▪ Ի՞նչ կլիներ, եթե…<br>▪ Կարո՞ղ էր<br>▪ Որո՞նք են . . . նմանություններն ու տարբերությունները<br>▪ Եթե դուք հայտնվեիք այդ իրավիճակում<br>▪ Համաձայն ես, որ … |

5. «Բլումի երիցուկը» (Նկար 3) հարցերով ամփոփում է, որը ևս փաստարկված խոսքի զարգացման հրաշալի ձև է: Հարցը ստիպում է մտածել, մշակել հիմնավորումներ և դրանք ճիշտ ու հստակ ներկայացնել: Գրատախտակին նկարված երիցուկի մեջտեղում գրվում է թեման, իսկ 6 թերթիկներում հետևյալ տիպի հարցեր. պարզ հարցեր(Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ), որոնք պահանջում են գիտելիք, ճշգրտող, հստակեցնող հարցեր (Արդյո՞ք



ճիշտ եմ հասկացել), մեկնողական հարցեր, որոնք վերհանում են պատճառներ (Ինչու՞), գնահատողական հարցեր (Ինչն է լավ, ինչը՝ վատ), գործնական հարցեր (Ինչպե՞ս կվարվեիք դուք), ստեղծագործական հարցեր (Ի՞նչ կլիներ, եթե…)։ Հարցերը կարելի է ըստ ծաղկաթերթերի գույների նշել, օրինակ՝ կարմիրում լինեին պարզ հարցեր, դեղինում՝ մեկնողական և այլն։ «Բլումի երիցուկը» կարելի է կիրառել գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ուսուցման ժամանակ։ Այս մեթոդը կօգնի ընկալել, վերլուծել ու գնահատել ստեղծագործությունը բոլոր կողմերից ու խորությամբ։

6. Փոխներգործուն գրառումների համակարգ.

| V | + | – | ? |
|---|---|---|---|
| Գիտեի | Իմացա | Հակասում է իմ իմացածին | Ուզում եմ այդ մասին իմանալ ավելին |
| | | | |

7. «Խաչվող քննարկում»։ Այս անգամ ընտրվում է թեմա, որը միավորում է երկու հակադիր տեսակետներ։ Յուրաքանչյուրը գրում է 3-5 փաստարկ յուրաքանչյուր տեսակետի օգտին։ Փաստարկները ընդհանրացվում են միկրոխմբերում։ Մասնակիցները բաժանվում են երկու խմբի. մի խումբը կլինի այն, որին հարազատ է առաջին տեսակետը, մյուսը,որին հարազատ է երկրորդ տեսակետը։ Խմբերը փաստարկները դասավորում են ըստ կարևորության և սկսվում է խաչաձև քննարկումը. առաջինը խումբը ներկայացնում է իր փաստարկը, երկրորդը՝ դրա հակափաստարկը։



8. Փաստարկված խոսքի ձևավորմանն է ուղղված նաև «Երկշարք կլոր սեղանը»։ Ուսուցիչը մասնակիցների ձևավորում է երկու խումբ։ Առաջին խումբը ձևավորում է «ներքին շրջանը», երկրորդը՝ «արտաքին շրջանը»։ Ներքին շրջանի մասնակիցներն ազատ արտահայտում են իրենց կարծիքները քննարկվող թեմայի շուրջ։ Կարևոր է, որ

մասնակիցները իրար չքննադատեն, այլ կարճ ու կոնկրետ ներկայացնեն իրենց տեսակետը: Երկրորդ՝ «արտաքին» շրջանի մասնակիցները արձանագրում են «ներքին» շրջանի մասնակիցների կարծիքները՝ պատրաստելով իրենց մեկնաբանություններն ու հարցերը: Մեկնաբանությունները կարող են վերաբերել քննարկվող հարցերի էությանը, կարծքիների օրինաչափությանը, կարծիքների հնարավոր պատճառներին և այլն: Ուսուցիչը համակրգում է աշխատանքը առանց միջամտելու կարծիքներին՝ ուղղորդելով երկխոսությունը քննարկվող թեմայի շրջանակ:

Այսպիսով՝ ի մի բերենք այն մեթոդները, որոնք քննադատական մտածողության զարգացման միջոցով նպաստում են նաև սովորողների խոսքը փաստարկված դարձնելուն[11].

1)մեթոդներ, որոնք օգնում են համակարգել և վերլուծել տեղեկատվությունը. «Փոխներգործուն գրառումների համակարգ» (Նկար ), «Վենի դիագրամ», «Բլումի երիցուկ»: Վերջինը տարատեսակ հարցերով փաստարկված խոսքը զարգացնելու հրաշալի միջոց է:

2) ձևավորել և ստեղծել խնդիրներ. «Ձկան փուշ», ԳՈՒՍ:

3)կառուցել հիմնավորված խոսք. «Խաչվող քննարկում»

4) նոր տեղեկությունը մեկնաբանելու, ստեղծագործաբար մշակելու, անցածի նյութի գնահատման մեթոդներ. «Հնգյակ», էսսե, T-աձև աղյուսակ, «Երկշարք կլոր սեղան»:

Բոլոր այս մեթոդները սովորողների մեջ զարգացնում են փաստարկումներ կատարելու հմտությունները, ձևավորում սեփական դիրքորոշում:

[11] https://4brain.ru/critical/argument.php Аргументация: как рассуждать последовательно и логично).

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իհարկե պատկերավոր մտածողության ու փաստարկված խոսքի զարգացմանը նպաստող առաջին հայացքից պարզ ու ծանոթ, բայց միևնույն ժամանակ բավական արդյունավետ միջոցներ են նաև.

- մասնակցություն հարցազրույցի
- բեմական իմպրովիզ
- բարդ տեքստի վերլուծություն
- բանաստեղծության ընթերցում վերջից սկիզբ
- բացատրում ենք երեխային, թե ինչու է շողում արևը
- հիմնավորումների ներկայացում հօգուտ …
- գովազդ

Այս շարքը կարելի է երկար շարունակել: Մտքի և խոսքի վարժեցման ընթացքում չպետք է մոռանալ, որ դրանք չպետք է միանգամյա միջոցառումներ լինեն: «Առիթից առիթը» սկզբունքն այստեղ արդյունք չի տա: Ինչպես որ մրցումների մասնակցելու համար է մարզիկը տարիներ շարունակ պարապում, այնպես էլ մտքի թռիչք ունենալու համար են պետք շարունակական վարժություններ: Բացի այդ ոչ սովորական առաջադրանքները բարձր դասարանցիների համար գրավիչ են լինում, ուրախ հույզեր նվիրում:

Պատկերավոր գրավոր ու բանավոր խոսքը ստեղծագործ, բարձր մտածական մակարդակ ունեցող անհատի վկայությունն է: Խոսքի պատկերավորության զարգացումը ուսուցման գործընթացում շարունակական է գեղարվեստական երկերի ուսումնասիրության շնորհիվ: Դրանց ընթերցումն ու վերլուծությունը ակամայից օգնում է աշակերտներին մեկնաբանել խորհրդանիշները, «կարդալ տողատակերը», վեր հանել բանաստեղծական խոսքի կառուցման առանձնահատկությունները, պատկերավորման միջոցները:

Փաստարկված խոսքին ուղղված աշխատանքը ուսուցչից ավելի ուղղորդված աշխատանք է պահանջում: Իսկ այս հմտության ձևավորումը անչափ կարևոր է

մերօրյա աշխարհում: Խոսքը հաղորդակցման, ինֆորմացիայի հաղորդման, մեկ այլ անձի գիտակցության ու արարքների վրա ազդելու միջոց է: Երբ մենք ինչ-որ բան ենք ենթադրում, վարկած կամ համոզմունք ներկայացնում, պետք է կարողանանք այն հիմնավորել: Դա հատուկ է գիտական աշխարհին, որտեղ ամեն ինչ պետք է ունենա հստակ ապացուցողական հիմք: Իսկ երեխան այն պահից, երբ սկսում է սովորել դպրոցում, անցնել տարբեր առարկաներ, սկսում է առնչվել գիտական մտքի հետ: Դա նշանակում է, որ սովորելու ընթացքում աշակերտը պետք է ուսումնասիրի տարբեր տեսական մոտեցումներ , կառուցի հիպոթեզներ ու ապացուցի դրանք: Այս առումով փաստարկված խոսքի տիրապետումը կարևոր դեր ունի: Այն կարևոր է նաև միջանձնային հարաբերություններում. փաստարկված խոսքի տրամաբանական հիմքերի յուրացումը թույլ է տալիս ոչ միայն գրագետ, դատողություններ անել, այլև հետազոտել տարաբնույթ դիրքորոշումներ ու տեսակետներ: Ինչպես տեսնում ենք փաստարկումը կարևոր է թե առօրյա կյանքում, թե մասնագիտական գործունեությունում, թե գիտական հետազոտություններում: Եվ ժամանակակից դպրոցում անխուսափելիորեն հառնում է հետևյալ խնդիրը՝ ինչպես աշակերտների մեջ զարգացնել փաստարկված խոսք, որը կօգնի աշակերտներին ունենալ իրականության հանդեպ հետազոտական, քննադատական և բազմակողմանի մոտեցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աղաջանյան Զարիկ, Հայոց լեզվի ուսուցման ու խոսքի մշակույթի ձևավորման մեթոդիկա, Երևան, 2021
2. Ավետիսյան Յուրի, Խոսքի արտահայտչականություն (http://www.ysu.am/files/06Y_Avetisyan-1431951000-.pdf )
3. Բժշկական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ
4. Գրականության տեսության արդի հիմնահարցեր, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016
5. Թովմասյան Թամարա, Աբազյան Ս., Գրականություն 7, Մեթոդական ձեռնարկ, Երևան 2019
6. Միքայելյան Ա., Մարդումյան Մ., Մտքի հրավառություն, Երևան, 2002,
7. Քննադատական մտածողության խթանման մեթոդներ, Ուղեցույց II
8. Ильясов, Д. Ф. Практическая психология в педагогической деятельности учителя. В 5 книгах. Кн. 1: Развитие интеллектуальной сферы учащихся : учебное пособие для слушателей курсов повышения квалификации педагогических кадров / Д. Ф. Ильясов, А. А. Севрюкова, Е. А. Селиванова, В. В. Кудинов. - Челябинск.
9. Обучение способам аргументации в школе: эволюция методов https://nsportal.ru/shkola/russkiy-yazyk/library/2013/01/21/obuchenie-sposobam-argumentatsii-v-shkoleevolyutsiya
10. https://4brain.ru/critical/argument.php Аргументация: как рассуждать последовательно и логично).